Հաստատում եմ՝ ՄԽՆ, 31.08.2023թ.

Դպրոցի տնօրեն՝ Վ.Մելքոնյան

ՀՀ Կոտայքի մարզի Քաղսիի միջնակարգ դպրոց

ՊԱՏՄԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2023-2024 ուսումնական տարի

Մեթոդական միավորման նախագահ՝ Ա. Անտոնյան

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Կրթությունը	Դասավանդվող առարկան	Աշխ. փորձը	ժամաքանակը	տարակարգ	Մանկ խորհրդի անդամ
1	Անտոնյան Անահիտ	Բարձրագույն	Պատմություն, Հասարակագիտություն ՀԵՊ	29	25	Որակ. առաջին աստիճան	այո
2	Մովսեսովա Լուսինե	Բարձրագույն	Հայոց պատմություն Համաշխարհային պատմություն	6	16		այո
3	Պետրոսյան Տաթև	Բարձրագույն	Աշխարհագրություն	12	14		այո

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Քննարկել հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները:

Առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ գումարել առարկայական մեթոդմիավորման նիստ, սահմանված կարգով արձանագրել նիստերը:

Հետևել պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշներին, ըստ նպատակի կիրառել սովորողների գնահատման երեք տեսաները.

1/ հայտորոշիչ գնահատում,

2/ ձևավորող գնահատում,

3/ ամփոփիչ գնահատում /միավորային և բնութագրող/:

Ուսուցչի կողմից ընտրված ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդները քննարկել առարկայական մեթոդական միավորման նիստում, ներկայացնել տնօրենի հրամանով հաստատման:

Քննարկել նախագծային ուսուցման կազմակերպման աշխատանքները: Ծանոթանալ երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգին:

Քննարկել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուսման պլանը, գնահատման իրականացումը:

Ուսումնասիրել, ընդհանրացնել մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնել գործնական աշխատանքում: Մասնակցել կամավոր ատեստացիային:

Որակական նոր մակարդակի վրա բարձրացնել պատմություն, հասարակագիտություն, հայոց եկեղեցու պատմություն, աշխարհագրություն առարկաների դասավանդումը դպրոցում: Բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը՝ լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները:

Ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից մշակված առարկայական չափոչոշիչների պահանջներին համապատասխան:

Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ-աշակերտ հարաբերություններին, նոր ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասապրոցեսի կազմակերպմանը:

Կազմակերպչական աշխատանքներ տանել երիտասարդ և սկսնակ ուսուցիչների մեթոդամանկավարժական , ուսուցչական պատրաստվածության բարձրացման և ինքնակրթության ապահովման ուղղությամբ:

Ուսումնասիրել և գործնականորեն կիրառել մանկավարժական –մասնագիտական նորագույն նվաճումները, հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման և բաց դասերի միջոցով:

Մանկավարժների կարևոր խնդիրներից մեկը համարել ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի կազմակերպումը և դասին յուրաքանչյուր աշակերտին իր հնարավորությունների չափով մասնակից դարձնելը, ապահովելով սովորողների ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը:

Սովորողների խոսքի կուլտուրայի և շարադրման կարողությունների զարգացումը դասավանդման ընթացքում: Աշակերտներին նախապատրաստել մասնակցելու առարկայական օլիմպիադաներին:

Ուսումնադաստիարակչական աշխատանքները նպատակաուղղել.

ա/ դաստիարակելու ազգային ու համամարդկային արժեքներ կրող ակտիվ անձ և քաղաքացի:

բ/ Ամրապնդելու հարգանք և հպարտություն Հայրենիքի հանդեպ:

գ/ Օգնել աշակերտներին կողմնորոշվելու հասարակական բազմաբնույթ հարաբերություններում՝ տալով գիտելիքների անհրաժեշտ պաշար:

2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

	Օրը, ամիսը, տարեթիվը	Ուսումնադաստիարակչական աշխատանքի անվանումը կամ համառոտ բովանդակությունը	Կատարող պաշտոնյան անուն ազգանունը
1	Օգոստոս 30.08.2023	1.2023-2024 ուստարվա մասնախմբի անդամների կազմի հաստատում: 2.2023-2024 ուստարվա ուսումնական պլանով սահմանված դասաժամերի բաշխում: 3.Քննարկել և մշակել մ/մ անդամ ուսուցիչների տարեկան առարկայական թեմատիկ պլանները և ներկայացնել հաստատման/1-ին կիսամյակ 15 շաբաթ, 2-րդ կիսամյակ 19 շաբաթ/: 4. Թեմատիկ գրավոր և գործնական աշխատանքների քանակի քննարկում և հաստատում: 6. Ուսումնադաստիարակչական աշխատանքային տարեկան պլանի նախագծի քննարկում և հաստատում: 7. Անցկացնել առարկայական մ/մ նիստեր, ծանոթացնել նոր ուստարվա աշխատանքային պլանին, տալ հանձնարարականներ: Նախորդ ուստարվա կատարած աշխատանքների ամփոփում, ուսումնական ձեռքբերումների և բացթողումների քննարկում: 8. Էլեկտրոնային մատյանի վարելու կարգի ներկայացում: 9. Ծանոթացում կրթակարգի հիմնական գործառույթներին և բարեփոխումներին: 10. ուսուցիչներին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, ԿԳՄՍ նախարարության հրամաններին և այլ նորմատիվ փաստաթղթերին:	Մ/մ նախագահ մ/մ ուսուցիչներ ուսգծով տ/տ
2	Սեպտեմբեր	1.Նախորդ ամսվա աշխատանքների քննարկում և ամփոփում: 2. Ուսուցչի աշխատանքային գործունեության և մասնագիտական որակի վերաբերյալ հարցերի քննարկում: 3.‹‹ Նախագծային ուսուցում›› մեթոդական զեկույց: 4. Էլեկտրոնային մատյաններում գրանցումներ կատարելու կարգի վերաբերյալ ծանուցում գրանցումները և գնահատականների անցկացումը կատարել 3-օրյա ժամկետում/: 5. Փոխադարձ դասալսումների կատարում և քննարկում: 6. Այցելություն Ս. Աստվածածին եկեղեցի 5-12-րդ դասարանների աշակերտների մասնակցությամբ, մոմավառություն՝ Արցախյան պատերազմում զոհված հերոսների հիշատակին:	մ/մ նախագահ, ուսուցիչներ, ուսգծով տ/տ Լ. Մովսեսովա

3	Հոկտեմբեր	1.Նախորդ ամսվա աշխատանքների քննարկում և ամփոփում: 2. Ուսուցիչների աշխատանքային մեթոդների և սովորողների բանավոր խոսքի զարգացման մակարդակի ուսումնասիրում: 3. Բաց դաս հասարակագիտությունից թեմա՝ ‹‹ Ընտրություններ›› 9-րդ դասարան: 4. Էքսկուրսիայի կազմակերպում Պատմության պետական թանգարան, 7-րդ դսարանի աշակերտների մասնակցությամբ: 5. Զեկույց. Թեմա՝ ‹‹Գնահատում››: 5. Փորձի փոխանակման նպատակով փոխադարձ դասալսումների կազմակերպում:	Մ/մ նախագահ, ուսուցիչներ Ուսգծով տ/տ Ա. Անտոնյան Ա.Անտոնյան Տ. Պետրոսյան
4	Նոյեմբեր	1.Նախորդ ամսվա աշխատանքների քննարկում և ամփոփում: 2. ՏՀՏ կիրառմամբ կազմակերպված դասերի քննարկուն և վերլուծություն: 3. Առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլի կազմակերպում, արդյունքների ամփոփում: 4. Բաց դաս համաշխարհային պատմություն առարկաներից, 10-րդ դասարանի սովորողների մասնակցությամբ, ‹‹Վաղ Հռոմ›› թեմայով: 5. Բաց դաս աշխարհագրությունից, 7-րդ դասարանի աշակերտների մասնակցությամբ, ‹‹Կլիմայական գոտիներ›› թեմայով:	Մ/մ նախագահ, ուսուցիչներ, Ուսգծով տ/տ Լ. Մովսեսովա Տ.Պետրոսյան
5	Դեկտեմբեր	1.Նախորդ ամսվա աշխատանքների քննարկում և ամփոփում: 2. 1-ին կիսամյակի կատարած աշխատանքների ամփոփում: 3. Էլեկտրոնային մատյաններում գրանցումների համապատասխանությունը թեմատիկ պլանի հետ, թեմատիկ գրավորների գործնական աշխատանքների, բանավոր գնահատականների ստուգում: 4. Զեկույց- քննարկում ‹‹Մանկավարժական հաղորդակցում›› թեմայով: 5. Անցկացված միջոցառումների , բաց դասերի, էքսկուրսիաների, կատարած դասալսումների ամփոփում: 6. Առաջին կիսամյակի առաջադիմության ամփոփում:	Մ/մ նախագահ, ուսուցիչներ Ուսգծով տ/տ Ա. Անտոնյան

6	Հունվար	1. 2-րդ կիսամյակի մ/մ աշխատանքների ու անելիքների քննարկում: 2. Սովորողների ուսուցման որակի բարձրացմանն ուղված նոր մեթոդների քննարկում: 3. Առարկայական օլիմպիադայի տարածքային փուլին մասնակցող սովորողների հետ արտադասարանական պարապունքների, շարունակական աշխատանքների կազմակերպում: 4. Էլեկտրոնային մատյանների վարման կարգի, ծրագրերի կատարողականության ստուգում: 5. Հունվարի 28-ի հայկական բանակի կազմավորման օրվան նվիրված թեմատիկ զրույցների անցկացման, տեսանյութերի դիտման, ռեֆերատների և այլ աշխատանքների կազմակերպում:	Մ/մ նախագահ, ուսուցիչներ Ուսգծով տ/տ
7	Փետրվար	1.Նախորդ ամսվա աշխատանքների քննարկում և ամփոփում: 2.Սուրբ Սարգիս, Տյառնընդառաջ ազգային տոներին նվիրված թեմատիկ զրույցներիի կազմակերպում, առցանց տեսանյութերի, տեսասահիկների դիտում, տոնակատարության կազմակերպում: 3. Թույլ առաջադիմություն ունեցող աշակերտների հետ կատարվող աշխատանքների արդյունքների քննարկում: 4. Մանկավարժական զեկույց. «Նժդեհը և նրա հայրենասիրական գաղափարախոսությունը» թեմայով: 5. Փոխադարձ դասալսումների կատարում: 6. Փետրվարի 25-ին Անդրանիկ Օզանյանի ծննդյան օրվա առթիվ դասախոսության կազմակերպում ավագ դասարաններում: 7. Առարկայական օլիմպիադայի տարածքային փուլի արդյունքների ամփոփում:	Մ/մ նախագահ, ուսուցիչներ Ուսգծով տ/տ Լ. Մովսեսովա Ա. Անտոնյան

8	Մարտ	1.Նախորդ ամսվա աշխատանքների քննարկում և ամփոփում: 2. 9-րդ և 12-րդ դասարանների աշակերտներին լրացուցիչ հանձնարարություններ տալ, պետական ավարտական քննություններին նախապատրաստելու նպատակով: 3. Մանկավարժական զեկույց. «Առավել հրատապ հարցեր» թեմայով: 4. Առարկայական օլիմպիադայի մարզային փուլի արդյունքների ամփոփում 5. Համակցված բաց դաս մաթեմատիկա և համաշխարհային պատմություն առարկաներից, 11-րդ դասարանի սովորողների մասնակցությամբ, «19-րդ դարի Ֆրանսիայի մշակույթը» թեմայով:	Մ/մ նախագահ, Ուսուցիչներ Ուսգծով տ/տ Տ. Պետրոսյան Լ. Մովսեսովա
9	Ապրիլ	1.Նախորդ ամսվա աշխատանքների ամփոփում: 2. Ապրիլի 7-ը եկեղեցական և հանրապետակն տոն թեմայով զրույցի կազմակերպում 5-րդ և 6-րդ դասարանների սովորողների հետ: 3. Փորձի փոխանակման նպատակով փոխադարձ դասալսումների կատարում, քննարկում: 4.Կազմակերպել զրույցներ, դասախոսություններ, ֆիլմի դիտումներ, փաստավավերագրական տեսաֆիլմերի ցուցադրումներ, այց Ծիծեռնակաբերդ հուշահամալիր, Ցեղասպանության թանգարան: 5. Զեկույց. «Ցեղասպանության վերաբերյալ թեմաների դասավանդումը դպրոցում» թեմայով:	Մ/մ նախագահ, ուսուցիչներ Ուսգծով տ/տ Ա. Անտոնյան

10	Մայիս	1.Նախորդ ամսվա աշխատանքների քննարկում և ամփոփում: 2. Բաց դաս՝ 8-րդ դասարանի աշակերտների մասնակցությամբ. «Մայիսյան փառահեղ հերոսամարտեր» թեմայով: 3. Էլեկտրոնային մատյաններում ծրագրի կատարողականության ստուգում: 4. Հետևել քննական նախապատրաստական աշխատանքների կազմակերպման ժամանակացույցին, կոնսուլտացիաների օրերին: 5. Անցկացնել դասալսումների, միջոցառումների, բաց դասերի, էքսկուրսիաների , զեկույցների և կատարած այլ աշխատանքների քննարկում և ամփոփում: 6. 2023-2024 ուստարվա առարկայական թեմատիկ պլանների և գրանցումների համապատասխանության, գրավոր աշխատանքների, բանավոր գնահատականների ստուգում:	Մ/մ նախագահ, ուսուցիչներ Ուսգծով տ/տ Ա. Անտոնյան
11	Հունիս	1.Նախորդ ամսվա աշխատանքների քննարկում և ամփոփում: 2. 9-րդ և 12-րդ դասարանների հայոց պատմություն առարկայի պետական ավարտական քննությունների արդյունքների ամփոփում: 3. 2023-2024 ուստարվա սովորողների առաջադիմության և որակի վերլուծություն և ամփոփում: 4. 2023-2024 ուստարվա մ/մ կատարած աշխատանքների ամփոփում և հաշվետվության ներկայացում:	Մ/մ նախագահ, ուսուցիչներ Ուսգծով տ/տ